

ԲԱԶՄԱԼԵԶՎՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ
ՈՒՍՈՒՑԱՆԿՈՂ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՓՈԽԱԶԳԵՑՈՒԹՅԱՆ
ՈՐՈՇ ԶԱՐՑԵՐ

Սույն հոդվածում դիտարկվում են բազմալեզվության պայմաններում երկրորդ օտար լեզվի (ՕԼ2) դասավանդման ընդհանուր օրինաչափությունները ԵՊԼՀ-ում: Ինչպես նշվում է եվրոպական լեզվաքաղաքականության և լեզվակրթության հիմնարար փաստաթղթում «Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգ» (էջ 69), լեզվական իրազեկությունը ներառում է գիտելիքներ ու կարողություններ տվյալ լեզվի հնչյունաբանության, բառապաշարի, քերականության, ուղղագրության, ուղղախոսության, ոճաբանության, ինչպես նաև լեզվական միավորների կիրառման կանոնների մասին հաղորդակցական-ճանաչողական մոտեցումների իրագործմամբ, ինչպես նաև այդ գիտելիքին համապատասխան հմտությունների և կարողությունների տիրապետում, ինչը հնարավորություն է տալիս կիրառելու տվյալ լեզվական միջոցները տարբեր լեզվական նպատակների համար, որոնցից են՝ լեզվական միավորների իմաստային և կառուցվածքային վերլուծությունը, տվյալ համատեքստում լեզվական միավորների գործածության առանձնահատկությունների վերլուծությունը, ինչը զարգացնում է ուսանողների լեզվական մտածողությունը: Վերջինս որպես ուսանողների մոտ առաջին օտար լեզվում (ՕԼ1) ձևավորված լեզվաբանական իրազեկության արդյունք, բարենպաստ գործոն է ՕԼ2-ի քերականության և բառապաշարի յուրացման համար, քանզի օգնում է առավել արագ և խորը ընկալելու և կիրառելու ՕԼ2-ի լեզվական երևույթները:

Լեզվաբանական ու մեթոդական գրականության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ՕԼ2-ի ուսուցման գործընթացում շփվող երեք լեզուների՝ մայրենիի (ՄԼ), ՕԼ1-ի և ՕԼ2-ի փոխազդեցության արդյունքում ի հայտ են գալիս բացասական փոխներթափանցման (Negative transfer) դեպքեր: Բացասական փոխներթափանցման աղբյուր է հանդիսանում ոչ միայն ՄԼ-ն, այլև ՕԼ1-ը: Բացասական փոխներթափանցման հետ մեկտեղ տեղի է ունենում նաև դրական փոխադրում (Positive transfer), ինչը նպաստում է երկրորդ օտար լեզվի յուրացմանը (Եարամոვა, 1993):

Բացասական փոխներթափանցումն ու դրական փոխադրումը հոգելեզվաբանական օրինաչափություններ են և ուսումնասիրվում են և՛ մեթոդական, և՛ հոգելեզվաբանական գրականության մեջ: Բացասական փոխներթափանց-

ման տակ հասկանում են լեզվական նորմերից կատարվող շեղումները: Սրանք երևույթներ են, որոնք ի հայտ են գալիս այն ժամանակ, երբ որևէ անձ (կամ մարդկանց խումբ) կանոնավոր կերպով օգտվում է տարբեր լեզուներից (Յու. Ռոզենցվեյգ, Լ.Մ. Ուման, 1962):

Թ. Օդլինը (1989) դրական փոխադրումն ու բացասական փոխներթափանցումը հետևյալ կերպ է սահմանում. «Լեզվական փոխադրումը նպատակային լեզվի (target language) և նախօրոք, թեկուզ և ոչ կատարելապես ուսումնասիրված լեզվի միջև առկա նմանություններից և տարբերություններից բխող փոխազդեցությունն է»:

Նա նաև նշում է, որ դրական փոխադրումը իրականանում է՝

ա) խոսքամտածական գործունեության մակարդակում. որքան շատ լեզուների է տիրապետում մարդը, այնքան ավելի զարգացած են նրա խոսքամտածական մեխանիզմները (կարծաժամկետ հիշողությունը, տեսալսողական ընկալումը, ընտրությունը, զուգադրումը, բանավոր և գրավոր խոսքի արդյունավետությունը, և այլն),

բ) ուսումնառական հմտությունների մակարդակում. ուսանողներն սկսում են ուսումնասիրել երկրորդ օտար լեզու, որոշակի լեզվական փորձ ունենալով մայրենի և առաջին օտար լեզուներից: ՄԼ-ի, և հատկապես ՕԼ1-ի, ուսուցման գործընթացում ուսանողի ձեռք բերած լեզվական գիտելիքները փոխանցվում են ՕԼ2-ի ուսումնառության գործընթաց, առավել հեշտացնելով այն:

գ) Հանրամշակութային մակարդակում. առաջին օտար լեզվի ուսուցման գործընթացում ձեռք բերված հանրամշակութային գիտելիքների հիմքի վրա ստեղծված նոր հանրամշակութային վարքագծի հմտությունները ևս կարող են դառնալ դրական փոխադրման առարկա, հատկապես արևմտամերիկական մշակույթների նմանության պարագայում:

Լեզվաբանական և մեթոդական գրականության ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ներկայումս ՕԼ2-ի դասավանդման գործընթացում ՄԼ-ի և ՕԼ1-ի հաշվառման սկզբունքի կիրառումը պայմանավորված է հետևյալ գործոններով.

1. կապը լեզվի, մտածողության և շրջապատող իրականության միջև, ինչն արտացոլվում է աշխարհի լեզվական պատկերի ձևավորման մեջ,
2. ուսանողներն սկսում են ՕԼ2 ուսումնասիրել՝ որոշակի լեզվական փորձ ունենալով ՄԼ-ից և ՕԼ1-ից,
3. ՄԼ-ով խոսքաստեղծման հմտությունների ու կարողությունների զարգացումը և խոսքամտածական գործունեության հիմքերի առկայությունը նախքան ՕԼ1-ին տիրապետումը և ՕԼ2-ի ուսուցումը.

4. Աշխարհի լեզվական համակարգերի մեծ մասին բնորոշ են այնպիսի լեզվական ընդհանրություններ, ինչպիսիք են հաստատումը, ժխտումը, սուբյեկտը, օբյեկտը, հասցեատերը, հատկանշումը, թիվը, եզակիություն/հոգնակիությունը, և այլն, որոնք OL2-ի յուրացումը հեշտացնող յուրօրինակ լեզվական գիտելիքներ են տալիս:

Բացասական փոխներթափանցման և դրական փոխադրման երևույթների առաջացումը պայմանավորված է հետևյալով՝

1. ՄԼ-ի գիտակցված տիրապետման մակարդակը:

2. OL1-ի տիրապետման մակարդակը. որքան լավ է ուսանողը տիրապետում OL1-ին, այնքան ավելի քիչ են բացասական փոխներթափանցման դեպքերը, և այնքան ավելի շատ հնարավորություններ են ստեղծվում դրական փոխադրման համար: Այստեղից էլ հետևում է, որ OL1-ի տիրապետման ցածր մակարդակը խոչնդոտում է OL2-ի տիրապետման գործընթացը (Dewaele, 1998, (Odlin, 1989).

ՀՀ համալսարանների լեզվական ֆակուլտետներում ուսանողների OL1-ի տիրապետման մակարդակն ավելի բարձր է, քանի որ OL1-ի՝ որպես մասնագիտության, ուսուցման ընթացքում ուսանողներն ուսումնասիրում են տվյալ լեզվի վերաբերյալ բազմազան գործնական և տեսական լեզվաբանական գիտակարգեր, որոնց խորը և բազմակողմանի ուսումնասիրությունը, ինչպես նաև լեզվաբանության, հայոց լեզվի տեսական դասընթացների սերտ փոխգործոթյունն ու փոխազդեցությունն առաջին օտար լեզվի գործնական դասընթացի հետ ապահովում են OL1-ով լեզվական իրազեկության ձևավորումը:

3. Ինչքան վաղ են սկսում OL2-ի ուսուցումը, այնքան մեծ է OL1-ի ազդեցությունը OL2-ի ուսումնառության վրա: Սովորողների մեծ մասը պնդում է, որ OL1-ի ազդեցությունը OL2-ի վրա ավելի ուժեղ է, քան ՄԼ-ի ազդեցությունը (B. Lapidus, 1980, M. Swan, 1985):

Դասավանդման մեր փորձը և գիտական հետազոտությունները ցույց են տալիս, որ թեև OL2-ուն կրում է է OL1-ի՝ ազդեցությունը, սովորողն, այնուամենայնիվ, գտնվում է թե՛ ՄԼ-ի, և թե՛ OL1-ի ազդեցության տակ: Այս առանձնահատկությունը պետք է հաշվի առնել անգլերենը որպես OL2 դասավանդելիս:

Վ.Գ Գակը (1979) նշում է, որ մայրենի կամ մի այլ լեզվի բացասական ազդեցությունը կարելի է վերացնել երկու ճանապարհով՝ կամ ձեռք բերած լեզվական փորձով, կամ էլ՝ գիտակցելով լեզուների միջև առկա տարբերությունները:

Լեզվական ընդհանրությունները կարևոր դեր են խաղում օտար լեզվի քերականության ուսումնասիրության ընթացքում, քանզի դրանք հիմնականում

վերաբերում են լեզվի քերականական կառուցվածքին: Հենց դրանք են որոշում OL2-ի և UL-ի OL1-ի քերականական երևույթների զուգադրական վերլուծության հնարավորությունը, ինչն օգնում է կանխագուշակելու ուսումնասիրված լեզուների և նոր յուրացվող լեզվի դրական կամ բացասական փոխներգործման ուղղուները, ինչպես նաև տվյալ լեզվական նյութի ուսուցման դժվարությունները: Բացի այդ, այսպիսի զուգադրությունը կարող է հիմք հանդիսանալ ինչպես OL2-ի, այնպես էլ OL1-ի լեզվական երևույթների ավելի խորը և գիտակցված տիրապետման և, այստեղից էլ, բանավոր խոսքում քերականական հմտությունների և հաղորդակցական կարողությունների ձևավորման համար:

Շփվող լեզուների լեզվական երևույթների հավանական փոխազդեցությունը ընդհանրացված ձևով կարելի է նկարագրել հետևյալ կադապարներով (Դաֆ, 1979) .

1. OL2-ի տվյալ լեզվական երևույթը նման է UL-ի և OL1-ի համապատասխան լեզվական երևույթին, ինչը հնարավոր է դարձնում դրական փոխադրումը, որն էլ իր հերթին նպաստում է նորի լեզվական նյութի յուրացմանը,
2. OL2-ի լեզվական երևույթը տարբերվում է UL-ի և OL1-ի համապատասխան լեզվական երևույթներից, և հետևաբար, դժվարություններ են առաջանում նոր լեզվական նյութի յուրացման գործընթացում,
3. OL2-ի լեզվական երևույթը նման է UL-ի համապատասխան երևույթին, սակայն տարբերվում է OL1-ի համապատասխան երևույթից: Այս դեպքում UL-ն դրական փոխադրման, իսկ OL1-ը բացասական փոխներթափանցման աղբյուր է դառնում:
4. OL2-ի լեզվական երևույթը նման է OL1-ի համապատասխան երևույթի հետ, բայց տարբերվում է UL-ից: Նման դեպքերում OL1-ն է դառնում դրական փոխադրման աղբյուր:

Միջլեզվային քերականական փոխներթափանցման դեպքում UL-ի կամ OL1-ի քերականական նորմերի հիման վրա ձևավորված հմտություններն ու կարողությունները փոխանցվում են OL2՝ խախտելով վերջինիս քերականական նորմերը: Ուսանողների՝ բավականին բարձր OL1-ի լեզվաբանական իրազեկությունը հեշտացնում է OL2-ի քերականության դասավանդումը: Ուսուցման ճիշտ կազմակերպման դեպքում, ինչը ենթադրում է ուսանողների՝ OL1-ի լեզվաբանական իրազեկության նպատակաուղղված կիրառում և UL-ի ու OL1-ի հիման վրա ձևավորված լեզվական մտածողության հաշվառում, կարող ենք OL2-ի քերականության ուսուցման գործընթացում UL-ի և OL1-ի դրական ազդեցությունն առավելագույնի հասցնել և այս կերպ հաղթահարել, կամ առնվազն նվազեցնել բացասական փոխներթափանցումը: Հատկապես կարևոր

է ուսանողների OL1-ի յուրացման արդյունքում ձևավորված լեզվական մտածողությունը, որը հնարավորություն կտա ուսանողներին ինքնուրույն նմանություններ տեսնել մայրենի, առաջին և երկրորդ օտար լեզուների լեզվական երևույթների միջև, գտնել համապատասխանությունները, զուգադրել, ընդգծել նմանություններն ու տարբերությունները, համապատասխան եզրակացություններ անել, ինչը կնպաստի նյութի ճիշտ ընկալմանը և հաղորդակցական վարժությունների օգնությամբ տվյալ նյութի հետագա վարժանքի և ամրապնդման հիմք կդառնա:

Անգլերենի՝ որպես երկրորդ օտար լեզվի, քերականության ուսուցման գործընթացում հայերենի և OL1-ի հաշվառման սկզբունքի վրա հիմնված զուգադրական մեթոդի կիրառման օրինակ կարող են ծառայել հետևյալ առաջադրանքները.

1. Նախադասություններում գտնել Participle II-ն, որոշել ձևը, անվանել շարահյուսական գործառույթները: Որոշել հայոց լեզվում հարակատար դերբայի շարահյուսական գործառույթները, անվանել հայերենի դերբայական ձևերը:

2. Տրված նախադասություններում ընտրել այն ձևերը, որտեղ անորոշ դերբայը հանդես է գալիս որպես. ա) ենթակա, բ) բաղադրյալ բայական ստորոգյալի վերադիր, գ) որոշիչ և այլն: Որոշել անորոշ դերբայի շարահյուսական գործառույթներն անգլերենում: Տալ անորոշ դերբայի շարահյուսական գործառույթների նմանություններն ու տարբերությունները ցուցադրող օրինակներ հայերենում, OL1-ում (գերմաներենում, ֆրանսերենում, իտալերենում, ռուսերենում) և OL2-ում՝ անգլերենում:

3. Տալ անգլերենի կրավորական անորոշ դերբայի (Passive Infinitive) կիրառության օրինակներ: Նախադասություններում գտնել կրավորական անորոշ դերբայը և որոշել UL-ում՝ հայերենում, OL1-ում (գերմաներենում, ֆրանսերենում, իտալերենում, ռուսերենում) և OL2-ում՝ անգլերենում, կրավորական անորոշ դերբայի գործածության նմանություններն ու տարբերությունները:

OL2-ի բառապաշարի յուրացման գործընթացում ևս սովորողները առընչվում են միջլեզվային փոխներթափանցման խնդրին: OL2-ի բառապաշարի ուսուցման գործընթացում հատկապես կարևորում ենք բառակազմության ուսուցումը: Ուսանողներին ծանոթացնում ենք անգլերենի բառակազմության՝ ածանցման, փոխակարգության, բառաբարդման, հապավումների, հերթագայության, հակադարձ կբառակազմությունների, ծուլւյթների, փոխառությունների, պատճենման հետ՝ դրանք համեմատելով UL-ի և OL1-ի բառակազմական միջոցների հետ:

Մեթոդական տեսանկյունից կարևորվում է ներգոր բառապաշարի զարգացումը: Ուսանողներին առաջարկվում է մշակված լեզվաբանական համալիր, որի շնորհիվ նրանք կադապարում են տրված բառային միավորները, դրանք ճանաչում և կիրառում են համապատասխան խոսքային իրադրություններում:

Ինչպես ցույց է տալիս դասավանդման մեր փորձը, OL2-ի՝ անգլերենի, քերականության և բառապաշարի ուսուցման գործընթացում առաջարկված հանձնարարությունները թույլ են տալիս բարձրացնելու ուսուցման արդյունավետությունը, քանզի այս հանձնարարություններում հաշվառված են բազմալեզվության պայմաններում OL2-ի՝ անգլերենի, ուսուցման առանձնահատկությունները:

Օգտագործած գրականության ցանկ

1. Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգ, ուսումնառություն, դասավանդում, զնահատում, Ստրասբուրգ, /հայերեն թարգմանություն/, Նորք Գրատուն, Երևան, 2005:
2. Dewaele, J. (1998). Lexical Inventions: French Interlanguage as L2 versus L3. *Applied Linguistics*, 19 (4), 471-490.
3. Dewaele, J. (2001). Activation or inhibition. The interaction of L1, L2 and L3 on the language mode continuum. In J. Cenoz, B. Hufeisen, & U. Jessner (Eds.), *Cross-linguistic influence in third language acquisition: Psycholinguistic perspectives* (pp. 69-89). Clevedon, UK: Multilingual Matters.
4. Swan, M. (1997). The influence of the mother-tongue on second language vocabulary acquisition and use. In: Schmitt, N. & McCarthy, M. (eds.) *Vocabulary: Description, Acquisition and Pedagogy*. Cambridge University Press.
5. Баграмова Н.В., Лингво-методические основы обучения лексической стороне устной речи на английском языке как втором иностранном в педагогическом вузе. Дис. д.п.н. 1993.
6. Гак В. Г.-Межъязыковое сопоставление и преподавание иностранного языка. ИЯШ. М. Изд-во "Просвещение". 1979. N 3.
7. Лапидус Б.А., Обучение второму иностранному языку как специальности. М. Изд-во "Высшая Школа". 1980.
8. Розенцвейг М.Ю., Л.М. Уман. К проблеме грамматической интерференции "Проблемы структурной лингвистики". Изд-во Академии наук СССР. М. 1962.